**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 22

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Դարպաս համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգը:

1.Դարպաս համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
3.Դարպաս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը և շինությունը աճուրդ վաճառքով օտարելու մասին:
4.Դարպաս համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենան աճուրդ վաճառքով օտարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ

ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**՝ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 23-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների , զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ

ԴՈԴՈՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 10-ի N 23 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Հարությունյան Արծրուն Ահարոնի – 10000 (տաս հազար) դրամ / զին. ծառ . արձակված/,
2. Մարգարյան Արմինե Յուրիկի – 15000 ( տասնհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/,
3. Դոդոյան Արմինե Նորիկի - 20000 ( քսան հազար) դրամ/ սոց. օգնություն/,
4. Մելքումյան Սուրեն Սամվելի - 20000 ( քսան հազար) դրամ/ սոց. օգնություն/,
5. Սերոբյան Լուսիկ Սենիկի - 20000 ( քսան հազար) դրամ/ սոց. օգնություն/,
6. Բայադյան Լյուդմիլա Հայկազի - 20000 ( քսան հազար) դրամ/ սոց. օգնություն/:

Ընդամենը՝ 105000 ( հարյուրհինգ հազար) դրամ:

Դարպաս համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Արմեն Ալոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 24

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դարպաս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և նրա վրա կառուցված մառանը աճուրդ վաճառքով օտարելու համար՝ 1լոտով:
2.Լոտ 1. 06-033-0017-0008 ծածկագրի 0.01216 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի մեկնարկային գինը 150000 ՀՀ դրամ, շինության շուկայան արժեքը ըստ ,,Մար-Մոս,, ՍՊԸ-ի կողմից գնահատված գինը՝ 250000 դրամ, ընդհանուր գույքի արժեքը կազմում է 400000 դրամ, մասնակցության վճարը՝ 4000 դրամ, նախավճարը 200000 դրամ, քայլի չափը՝ 20000 դրամ:
3. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ

ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 25

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ,,Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքով, հիմք ընդունելով ,, Մար-Մոս,, ՍՊԸ-ի կոմից տրամադրված գույքի գնահատված եզրակացությունը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դարպաս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող UAZ 315192-037 մակնիշի մարդատար ավտոմեքենան աճուրդ վաճառքով օտարելու համար՝ 1լոտով:
2.Լոտ1 մեկնարկային գինը 540000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 4000 դրամ, նախավճարը 270000 դրամ, քայլի չափը՝ 27000 դրամ:
3. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ ապահովել աճուրդով վաճառվող գույքը հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ

ԴՈՂՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**